հուլիս, 2026

Երաժշտության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 70:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասն ընդգրկում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ № 1-6:

Հրահանգ: Առաջին վեց առաջադրանքից յուրաքանչյուրը բաղկացած է մեկ երաժշտական հատվածից և երկու հարցից: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը: Ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, համապատասխանաբար, յուրաքանչյուր առաջադրանք՝ երկու միավոր:

Առաջադրանքի համար նախատեսված երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան: Նախքան երաժշտական հատվածի ունկնդրելը տրվում է 10 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը կարդալու համար:

Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:

(2) **Առաջադրանք № 1.**

Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

1.1 Ո՞ր ժանրին է պատկանում երգը:

ա) Օրացուցային,

բ) արշավային,

գ) ծիսական,

դ) աշխատանքային:

1.2 Վրաստանի ո՞ր շրջանի երգն է:

ա) Թուշեթի,

բ) Ռաճայի,

գ) Գուրիայի,

դ) Փշավիի:

(2) **Առաջադրանք № 2.**

Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

2.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Գիորգի Ցաբաձեն,

բ) Սուլխան Ցինցաձեն,

գ) Բիձինա Կվերնաձեն,

դ) Ջանսուղ Կախիձեն:

2.2 Ո՞ր կինոֆիլմից է հնչում երաժշտական հատվածը:

ա) «Մայա Ծղնեթացի» („მაია წყნეთელი“),

բ) «Աղերսանք» („ვედრება“),

գ) «Խելառները» („შერეკილები“),

դ) «Ուրախ սիրավեպ» („მხიარული რომანი“):

(2) **Առաջադրանք № 3.**

Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

3.1 Ո՞ր գործիքային կազմն է կատարում հատվածը:

ա) Սիմֆոնիկ նվագախումբը,

բ) կամերային-գործիքային անսամբլը,

գ) փողային երաժշտական գործիքների նվագախումբը,

դ) լարային-աղեղնավոր երաժշտական գործիքների նվագախումբը:

3.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Արթուր Օնեգերը,

բ) Իգոր Ստրավինսկին,

գ) Ջորջ Գերշվինը,

դ) Էյտոր Վիլա-Լոբոսը:

(2) **Առաջադրանք № 4.**

Նախքան չորրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

4.1 Ո՞ր ժանրին է պատկանում հատվածը:

ա) Օրատորիայի,

բ) մեսսայի,

գ) օպերայի,

դ) մոտետի:

4.2 Ո՞ր դարաշրջանին է պատկանում երաժշտությունը:

ա) Բարոկկոյին,

բ) Միջնադարին,

գ) Ռենեսանսին,

դ) Կլասիցիզմին:

(2) **Առաջադրանք № 5.**

Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

5.1 Ո՞ր ժանրին է պատկանում հատվածը:

ա) Ուվերտյուրային,

բ) սյուիտին,

գ) սիմֆոնիային,

դ) կոնցերտին:

5.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Լյուդվիգ վան Բեթհովենը,

բ) Սերգեյ Ռախմանինովը,

գ) Օլիվյե Մեսսիանը,

դ) Էդվարդ Գրիգը:

(2) **Առաջադրանք № 6.**

Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

6.1 Ո՞ր երգիչն է կատարում երգը:

ա) Ժակ Բրելը,

բ) Բոբ Մառլին,

գ) Ստիվ Վանդերը,

դ) Ռեյ Չառլզը:

6.2 Ո՞ր ժանրին է պատկանում երգը:

ա) Ֆոլկին,

բ) բլյուզին,

գ) շանսոնին,

դ) ռոքին:

(1) Առաջադրանք № 7.

<u>Հրահանգ:</u> Ունկնդրեք երաժշտական հնչյունների շարքը: Նոտային գրառման մեջ տրված լադի չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը:

Հնչյունների շարքը լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(1) Առաջադրանք № 8.

<u>Հրանանգ:</u> Լսեք երաժշտական արտահայտությունը (ֆրազ): Նոտային գրառման մեջ տրված չորս տարբերվող ռիթմիկ ֆիգուրացիաներից ընտրեք ունկնդրած արտահայտության (ֆրազ) համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը:

Երաժշտական արտահայտությունը (ֆրազ) լսում եք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(5) Առաջադրանք № 9.

Երաժշտական թելադրություն:

<u>Հրահանգ:</u> Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգում: Մեղեդին միաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Մեղեդին լսելու և գրառելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ հինգ անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Թելադրությունը տրված է *<u>Մի մինոր (e moll)</u>* տոնայնության մեջ:

<u>Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգ, գրչով:</u>

(13) Առաջադրանք № 10.

Երաժշտական ստեղծագործության վերլուծություն

Հրահանգ: Վերլուծեք երաժշտական ստեղծագործության հատվածը՝ աուդիո ձայնագրության և նոտային գրառման հիման վրա: Երաժշտական ստեղծագործության հատվածը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

Հարցերը դիտեք հաջորդ երկու էջի վրա:

(2) 1. Ո՞ր ժանրին է պատկանում ստեղծագործությունը, որի հատվածն ունկնդրել եք: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

(3) 2. Որոշեք՝

ա) հատվածի սկզբնական տոնայնությունը,

բ) 1-8-րդ տակտերում տրված հատվածի երաժշտական ձևը,

գ) 6-8-րդ տակտերում տրված կադանսում պարունակվող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

(3) 3. Բնութագրեք տրված հատվածը գեղարվեստա-հուզական տեսանկյունից: Վերլուծեք և նկարագրեք երաժշտության արտահայտչամիջոցները, որոնք հատկապես կարևոր են դրա երաժշտագեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար (ինչ տեսակի մեղեդի, ռիթմ, տեմպ, ռեգիստր, տեմբր, ներդաշնակություն (հարմոնիա), լադատոնայնություն, ֆակտուրա և այլ է կիրառված ունկնդրած հատվածում):

(2) **4.** Ունկնդրած ստեղծագործության հատվածի երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք կոմպոզիտորի ինքնությունը և այն դարաշրջանը, որին նա պատկանում է:

(3) **5.** Համառոտ բնութագրեք կոմպոզիտորի ստեղծագործականությունը: Դիտարկեք ստեղծագործությունը, որին պատկանում է ունկնդրած հատվածը և դատողություն արեք նրա պատմամշակութային համատեքստի շուրջ: Քննարկեք, թե ինչ նորարարություններ է ներմուծել կոմպոզիտորը այն ժանրի զարգացման մեջ, որին պատկանում է ունկնդրած ստեղծագործությունը:

Երաժշտական հատվածի նոտային գրառումը դիտեք հաջորդ էջերում:


Andante con moto.
Klar.
Fag.
p dolce
Quart.
Corni.
Ob. u. Fag.
mit Fl.
Corni.
Str. Quart.
Voi, che sa - pe - - te,
che co - sa e a - mor don - - ne, ve - de - - te, s'io l'ho nel
Klar.
Fag.
Fl. Ob.
Klar.
Fag.


16
cor, don - ne, ve - de - te, s'io l'ho nel cor!
Fl. u. Ob.
Quart.
21
Quel - lo ch'io pro - vo, vi ri - di - rò, è per me nuo - vo,
Ob.
Fag.
Fl. Klar.
27
ca - pir nol so. Sen - to un af - fet - to pien di de - sir,
Ob.
Viol.
H. Bl.


33
ch'o - - ra è di - let - - to, ch'o - - ra è mar - tir; ge - - lo, e poi
Fl.
Ob.
38
sen - - to l'al - ma av vam - par, e in un mo - men - to
Klar.
Klar. u. Fag.
43
tor - - no a ge - lar; ri - - cer - co un be - ne fuo - ri di
H. Bl.
Viol.


48
me, non so chi il tie - - ne, non so cos' è; so - spi - ro e
H. Blas.
F.
Ob.
53
ge - mo sen - za vo - ler; pal - pi - to e tre - mo sen - za sa - per; non tro - vo pa - ce not - te nè
sf p
sf p
58
dì, ma pur mi pia - ce lan - guir co - sì! Voi, che sa -
Viol.


63
pe - te, che co - sa è a - mor, don - ne, ve - de - - te, s'io l'ho nel
Klar. Fag.
Fl. u. Ob.
Klar. Fag.
69
cor, don - ne, ve - de - - te, s'io l'ho nel cor,
Fl. Ob.
Klar.
Fag.
Ob.
Fl. u. Ob.
74
don - ne, ve - de - - te, s'io l'ho nel cor!
tr
Ob.
tr
Fl.

II մաս

Առաջադրանքներ № 11-28.

Հրահանգ: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ. X նշանը դրեք պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում: Ոչ մի ուրիշ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չեն ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշված պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է՝ 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 11.**

Ինչպե՞ս է կոչվում ֆուգայի այն հատվածը, որտեղ երաժշտական թեման սկզբում հնչում է բոլոր ձայներում:

ա) Ռեպրիզա,

ծ) էքսպոզիցիա,

գ) նախերգանք,

զ) պրելյուդ:

(1) **Առաջադրանք № 12.**

Ո՞վ է Առնոլդ Շյոնբերգի «Լուսնային Պիերո» մելոդրամայի բանաստեղծական սկզբնաղբյուրի հեղինակը:

ա) Հայնրիխ Հայնե,

բ) Վիլհելմ Մյուլլերը,

գ) Ալբեր Ժիրո,

դ) Ստեֆան Մալարմե:

(1) **Առաջադրանք № 13.**

Պոլիֆոնիկ ձևի ո՞ր պարզաբանումն է համապատասխանում երաժշտական կանոնին:

ա) Ձայները հերթականությամբ ներգրավվելիս, յուրաքանչյուր հաջորդող ձայնի կողմից առաջին ձայնի մեղեդու ճշգրիտ կրկնությունը,

ծ) մի քանի մեղեդային գծի միաժամանակյա հնչողությունը և դրանց անկախ զարգացումը,

գ) երկու երգչախմբի կողմից աղոթքի տեքստերի վրա կառուցված բազմաձայնային վոկալային ֆրազների կատարումը հերթափոխությամբ,

զ) մեկ երաժշտական թեմայի կրկնությունը տարբեր ձայներում, յուրաքանչյուրում թեմայի տարբերվող զարգացմամբ:

(1) **Առաջադրանք № 14.**

Հետևյալ երաժշտական տերմիններից ո՞րն է արտահայտում հույզ:

ա) Decrescendo,

բ) Accelerando,

գ) Appassionato,

դ) Prestissimo:

(1) **Առաջադրանք № 15.**

Կլաուդիո Մոնտեվերդիի ստեղծագործությունների վերաբերյալ ո՞ր բնութագիրն է *սխալ:*

ա) Օպերայի ժանրում երաժշտության դրամատիկական արտահայտչականության հզորացման դրսևորումն է Lamento («Լամենտո») արիան,

ծ) օպերաների լիբրետոների համար կոմպոզիտորը կիրառում է ոչ միայն դիցաբանական, այլ նաև պատմական թեմաներ,

գ) երաժշտության հուզական բազմազանությունը փոխանցելու համար Մոնտեվերդին ավելացնում է գործիքների քանակը նվագախմբում,

զ) Մոնտեվերդիի ստեղծագործությունները պարունակում են միայն աշխարհիկ բովանդակության երաժշտական ժանրեր:

(1) **Առաջադրանք № 16.**

Ո՞ր կոմպոզիտորն է ստեղծել պրելյուդների՝ որպես անկախ պիեսների ցիկլը:

ա) Ֆրեդերիկ Շոպենը,

բ) Յոհաննես Բրամսը,

գ) Ֆերենց Լիստը,

դ) Էդվարդ Գրիգը:

(1) **Առաջադրանք № 17.**

Ո՞ր բնութագիրը *չի համապատասխանում* Ջոակինո Ռոսսինիի «Սևիլյան սափրիչը» օպերային:

ա) Օպերայի գեղարվեստական պատկերների զարգացման մեջ կարևոր է լայթմոտիվային համակարգը,

ծ) օպերայի համարային կառուցվածքի մասն է secco ռեչիտատիվների ձևը,

գ) օպերան պատկանում է buffa-ի ժանրին և բաղկացած է երկու գործողությունից,

զ) ուվերտյուրան օպերայի հետ կապված չէ երաժշտական թեմաներով:

(1) **Առաջադրանք № 18.**

Ի՞նչն է բնորոշ մինիմալիզմի ուղղությանը:

ա) Կոմպոզիցիաները գրվում են կամերային անսամբլների համար, որտեղ գերիշխում են գործիքների սոլո պարտիաները,

ծ) գերակայություն է ձեռք բերում մանրանկարչության ժանրը, մինչդեռ օպերա և այլ մեծ ծավալի ստեղծագործություններ չեն ստեղծվում,

գ) մինիմալիստական ձևերը գրվում են տասներկու չկրկնվող հչյունաշարի («սերիայի») կիրառմամբ,

զ) երաժշտական զարգացման հիմքն են պատտեռնները, կրկնվող մոտիվները, որոնք չնչին են փոփոխվում:

(1) **Առաջադրանք № 19.**

Ո՞ր տեսակի ձայների դասավորությունն է ներկայացված նոտային գրառման մեջ:

ա) Հոմոֆոնիկ,

բ) պոլիֆոնիկ,

գ) մոնոդիկ,

դ) ակորդային:



(1) **Առաջադրանք № 20.**

Ինչպե՞ս է կոչվում երաժշտական ստեղծագործության մեջ այլ ստեղծագործություններից վերցված հատվածների որոշակի ձևով միավորումն ու ընդգրկումը:

ա) Ստիլիզացիա,

բ) կոլաժ,

գ) իմպրովիզացիա,

դ) իմիտացիա:

(1) **Առաջադրանք № 21.**

Ո՞ր գրողի գրական ստեղծագործությունն է դրվել Դավիթ Թորաձեի «Գորդա» բալետի հիմքում:

ա) Ակակի Ծերեթելիի,

բ) Էգնատե Նինոշվիլիի,

գ) Դանիել Ճոնքաձեի,

դ) Նիկո Լորթքիփանիձեի:

(1) **Առաջադրանք № 22.**

Ո՞ր երաժշտական ձևով *չէին գրվում* ստեղծագործությունները Բարոկկոյի դարաշրջանում:

ա) Ռոնդոյի ձևով,

բ) սոնատային ձևով,

գ) վարիացիոն ձևով,

դ) եռամաս ձևով:

(1) Առաջադրանք № 23.

Ո՞ր պարային ժանրին է պատկանում Ֆրեդերիկ Շոպենի ստեղծագործության հատվածը, որը ներկայացված է նոտային գրառման մեջ:

ա) Վալսին,

բ) բոլերոյին,

գ) պոլոնեզին,

դ) մազուրկային:



(1) **Առաջադրանք № 24.**

Ի՞նչ տիպի ստեղծագործություն է Ռենեսանսի դարաշրջանի մադրիգալը:

ա) Հոգևոր բովանդակության մոնոդիկ երգասացության ձև,

բ) աշխարհիկ երաժշտաբանաստեղծական ժանրի բազմաձայն երգ,

գ) լարային-աղեղնավոր երաժշտական գործիքների անսամբլ կլավեսինի նվագակցությամբ,

դ) աղոթքի տեքստերի վրա գրված ստեղծագործություն խառը երգչախմբի համար:

(1) **Առաջադրանք № 25.**

Ո՞ր դարաշրջանի հետ է կապված ջութակի կոնցերտի ժանրի ստեղծումը:

ա) Ռենեսանսի,

բ) Կլասիցիզմի,

գ) Բարոկկոյի,

դ) Միջնադարի:

(1) **Առաջադրանք № 26.**

Ո՞ր երկրում է ապրել Գեորգ Ֆրիդրիխ Հենդելը կյանքի վերջին ժամանակաշրջանում:

ա) Իտալիայում,

բ) Ֆրանսիայում,

գ) Մեծ Բրիտանիայում,

դ) Գերմանիայում:

(1) **Առաջադրանք № 27.**

Ո՞վ է այն օպերայի կոմպոզիտորը, որի գործող անձն է Սերպինան:

ա) Գեորգ Ֆրիդրիխ Հենդելը,

բ) Յակոպո Պերին,

գ) Անտոնիո Վիվալդին,

դ) Ջովաննի Բատիստա Պերգոլեզին:

(1) **Առաջադրանք № 28.**

Ո՞ր խումբն է *սխալ:*

ա) Կանացի օպերային ձայներն են՝ սոպրանո, մեցցո սոպրանո, կոնտրալտո,

բ) հարվածային երաժշտական գործիքներն են՝ լիտավրեր, տամտամ, եռանկյուն,

գ) հույզ նշանակող տերմիններն են՝ agitato, dolce, portamento,

դ) կատարման արագությունը սահմանող տերմիններն են՝ allegro, moderato, vivace:

Առաջադրանքներ № 29 - 32.

Կառուցում նոտայից

<u>Հրահանգ:</u> Կառուցեք և պատասխանների թերթիկի վրա տրված նոտաների համակարգի վրա գրառեք՝ ինտերվալը, ակորդները և լադը *<u>Դ-ռ</u>* նոտայից:

(1) 29. Փոքր սեպտիմա:

(1) 30. Մաժոր սեքստակորդ:

(1) 31. Փոքրացրած սեպտակորդ:

(1) 32. Մեղեդիական մինոր:

Առաջադրանքներ № 33-35.

Համապատասխանության որոշում

<u>Հրահանգ:</u> Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի *<u>միայն մեկ</u>* տվյալ (ա, բ, գ, դ, ե): Յուրաքանչյուր ընտրված համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

(3) **Առաջադրանք № 33.**

Որոշեք համապատասխանությունը ժողովրդական երգերի և Վրաստանի շրջանների միջև.

1. «Չակրուլո» („ჩაკრულო“)	ա) Իմերեթի
2. «Միրանգուլա» („მირანგულა“)	բ) Կախեթի
3. «Չարի Ռամա» („ჩარი რამა“)	գ) Սվանեթի
	դ) Փշավի
	ե) Թուշեթի

(3) **Առաջադրանք № 34.**

Որոշեք համապատասխանությունը օպերաների և դրանց գրական սկզբնաղյուրների հեղինակների միջև.

1. «Ռիգոլետտո»	ա) Կառլո Գոցցի
2. «Տուրանդոտ»	բ) Վիկտոր Հյուգո
3. «Ֆիգարոյի հարսանիքը»	գ) Ուիլյամ Շեքսպիր
	դ) Ֆրիդրիխ Շիլլեր
	ե) Պիեռ Բոմարշե

(3) **Առաջադրանք № 35.**

Որոշեք համապատասխանությունը իտալական երաժշտական տերմինների և դրանց թարգմանության միջև:

1. Mesto	ա) Երգեցիկ
2. Leggiero	բ) Ուրախ
3. Giocoso	գ) Տխուր
	դ) Վեհասքանչ
	ե) Թույլ

Առաջադրանքներ № 36-40.

«Ճշմարիտ է-Սխալ է»

Հրահանգ: Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ: Եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում: Նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, *իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:*

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը կարող եք համապատասխանեցրել ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն: Հաշվի առեք, որ պատասխանը չի ընդունվի, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականով կամ ընդհակառակը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 36.**

Երաժշտական թեմայի փոփոխված կրկնությունը կոչվում է *վարիացիոն ձև:*

(1) **Առաջադրանք № 37.**

Երաժշտական հնչյունների բարեհնչությունը կոչվում է *դիսոնանս:*

(1) **Առաջադրանք № 38.**

Երաժշտական դինամիկան արտացոլում է լադի դիատոնիկ հնչյունի բարձրության փոփոխությունը խրոմատիկ հնչյունով՝ կես կամ ամբողջ տոնով:

(1) **Առաջադրանք № 39.**

«Օիսա»-ն Իմերեթիի ժողովրդական երգ է:

(1) **Առաջադրանք № 40.**

Կլաստեր կոչվում է Բարոկկոյի ժամանակաշրջանի պոլիֆոնիկ ձևերից մեկը:

Առաջադրանքներ № 41-42.

Ժամանակագրության որոշում

Հրահանգ: Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Գրեք պատասխանները վանդակում՝ ընտրված թվանշանի երկայնքով, այբուբենի համապատասխան տառերով (ա, ծ, գ, զ): Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 41.**

Ժամանակագրական կարգով դասավորեք կոմպոզիտորների թվարկացանկը՝ ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի:

ա) Անդրիա Բալանչիվաձե,

ծ) Նիկո Սուլխանիշվիլի,

գ) Սուլխան Ցինցաձե,

զ) Միխեիլ Շուղլիաշվիլի:

(1) **Առաջադրանք № 42.**

Ժամանակագրական կարգով դասավորեք գործիքային սյուիտների թվարկացանկը՝ ըստ դրանց ստեղծման ժամանակաշրջանի:

ա) «Գիշերային Գասպար»,

բ) «Շեհերազադե»,

գ) «Երաժշտություն ջրի վրա»,

դ) «Դիմակահանդես»: